

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՇՎԱՊԱՅՆԵՐԻ և ԱՌԴԴՏՈՐՆԵՐԻ  
ԱՍՈՑԻԱՑԻԱ

## ՇՄՁ դասընթաց

ՀՀՄՍԽ Հայեցակարգային հիմունքները

---

Արթուր Հարությունյան

*Փետրվար 2019*



# Պատմական ակնարկ

---

- Ընդունվել է ՀՀՄՍԿ կողմից 1989 թ.
- Հետագայում հաստատվել է ՀՀՄՍԽ կողմից 2001 թ.
- Մասնակի վերանայման է ենթարկվել 2010 թ.
- Մինչ այդ կոչվում էր՝ Framework for the Preparation and Presentation of Financial Statements
- Այդուհետ՝ Conceptual Framework for Financial Reporting



# Պատմական ակնարկ (շարունակությ.)

- 2010 թ. նորովի է ընդունվել 2 գլուխ՝
  - Ընդհանուր նշանակության ֆինանսական հաշվետվությունների նպատակը
  - Օգտակար ֆինանսական տեղեկատվության որակական բնութագրերը
- 2015-ի մայիսին հրապարակվել է ամբողջական նախագիծ՝ ներառյալ 2010-ին նորացված երկու գլուխները թեթևակի փոփոխություններով:
- 2018-ի մարտին հրապարակվեց ամբողջական վերանայված տարբերակը, որն ուժի մեջ է մտնում՝
  - 2020-ի հունվարի 1-ից,
  - իսկ ՀՀՄՍԽ-ի և ՖՀՄՍ մեկնաբանությունների կոմիտեի համար՝ անմիջապես:



# Կառուցվածքը

---

- Գլուխ 1 Ընդհանուր նշանակության ֆինանսական հաշվետվությունների (ՖՀ) նպատակը
- Գլուխ 2 Օգտակար ֆինանսական տեղեկատվության որակական բնութագրերը
- Գլուխ 3 ՖՀ-երը և հաշվետու կազմակերպությունը
- Գլուխ 4 ՖՀ տարրերը
- Գլուխ 5 Ճանաչումը և ապաճանաչումը
- Գլուխ 6 Չափումը
- Գլուխ 7 Ներկայացումը և բացահայտումը
- Գլուխ 8 Կապիտալի և կապիտալի պահպանման հայեցակարգերը



# Հայեցակարգային հիմունքների դերը

---

- **ՀՀՄՍԽ-ն** օգտագործում է *Հիմունքները* ստանդարտների սահմանման համար.
  - բարելավում է հետևողականությունը ստանդարտների միջև,
  - բարելավում է հետևողականությունը ժամանակի ընթացքում՝ Խորհրդի անդամները փոփոխվելիս:
  - Տրամադրում է ուղենիշեր դատողությունների համար:
- **ՖՀՄՍ Մեկնաբանությունների Կոմիտեն** օգտագործում է *Հիմունքները*՝ ՖՀՄՍ-ները մեկնաբանելու համար՝ ՖՀՄՍ պահանջի բացակայության դեպքում:
- **Պատրաստողներն** օգտագործում են Հիմունքները հատուկ ստանդարտի բացակայության կամ այլընտրանքների առկայության դեպքում հաշվապահական հաշվառման քաղաքականություն մշակելու համար:
  - ՀՀՄՍ 8 հիերարխիա



# Հիմնական փոփոխությունները

## ■ *Նորամուծություններ*

- **Չափման հայեցակարգերը**, ներառյալ չափման հիմունք ընտրելիս դիտարկվելիք գործոնները,
- **Ներկայացման և բացահայտման** հայեցակարգերը, ներառյալ ԱՅՖԱ-ում եկամուտներն ու ծախսերը ներառելը,
- **Ապաճանաչում:**

## ■ *Փոփոխություններ*

- Ակտիվի և պարտավորության սահմանումները
- Ճանաչման չափանիշներ:

## ■ *Հստակեցումներ*

- Հաշվենկատություն
- Տնտեսվարություն՝ պատասխանատու կառավարում (Stewardship)
- Չափման անորոշություն
- Ձևի նկատմամբ բովանդակության գերակայություն

# ՀՀՄՍԽ-ի Հայեցակարգային հիմունքները

- Հայեցակարգային հիմունքները սահմանում է համաձայնեցված հայեցակարգերը, որոնք կազմում են ՖՀՄՍ-ներով ֆինանսական հաշվետվությունների հիմքը.
    - Ընդհանուր նշանակության ֆինանսական հաշվետվությունների նպատակը,
    - Օգտակար ֆինանսական տեղեկատվության որակական բնութագրերը,
    - Ֆինանսական հաշվետվությունների տարրերը,
    - Ճանաչումը,
    - Չափումը,
    - Ներկայացումը և բացահայտումը:
- Բոլոր մյուս հայեցակարգերը բխում են նպատակից ( § 1.1)

# Ֆինանսական հաշվետվությունների նպատակը

- Տրամադրել ֆինանսական տեղեկատվություն հաշվետու կազմակերպության մասին, որն օգտակար կլինի **ներկա և պոտենցիալ ներդրողների, փոխատուների և այլ կրեդիտորների համար՝** տվյալ կազմակերպությանը միջոցներ տրամադրելու վերաբերյալ որոշումներ կայացնելիս (գնել, վաճառել, պահել, վարկ տրամադրել/մարել, քվեարկել ևն ( § 1.2)):
- ...ովքեր չեն կարող պահանջել հաշվետու կազմակերպություններից տեղեկատվությունը անմիջականորեն իրենց տրամադրել ( § 1.5),
- ...ովքեր ունեն բավարար գիտելիքներ բիզնեսի և տնտեսական գործունեության մասին և ովքեր ջանասիրաբար ուսումնասիրում և վերլուծում են տվյալ տեղեկատվությունը ( § 2.36):



# Ֆինանսական հաշվետվությունների նպատակը (շարունակություն)

- Ներդրողների, վարկատուների և այլ կրեդիտորների՝ եկամուտների (հատույցների) վերաբերյալ ակնկալիքները կախված են ընկերության ապագա զուտ դրամական ներհոսքի **չափի, ժամկետների** և անորոշության (**հեռանկարների**) գնահատականից:
  - Բաժնային կամ պարտքային գործիքների առքի, վաճառքի կամ պահելու վերաբերյալ ներդրողների որոշումները կախված են այդ գործիքներում արված ներդրումներից ակնկալվող հատույցներից, օր., **շահաբաժիններ, հիմնական գումարի և տոկոսների վճարումներ** կամ շուկայական **գների աճ**:
  - Փոխառությունների կամ վարկերի այլ ձևերի տրամադրման կամ մարման վերաբերյալ վարկատուների որոշումները կախված են **հիմնական գումարի և տոկոսների վճարումներից** կամ նրանց կողմից ակնկալվող **այլ հատույցներից**:

# Ֆինանսական հաշվետվությունների նպատակը (շարունակություն)

- Կազմակերպության (Կ) ապագա զուտ դրամական ներհոսքի հեռանկարները գնահատելու համար ներկա և պոտենցիալ ներդրողներին, վարկատուներին և այլ կրեդիտորներին հարկավոր է տեղեկատվություն հետևյալի մասին.
  - կազմակերպության ռեսուրսների, կազմակերպության հանդեպ պահանջների և այդ ռեսուրսների ու պահանջների փոփոխությունների
  - թե որքան արդյունավետ և արդյունարար կերպով է Կ-ի ղեկավարությունը և կառավարման խորհուրդը կատարում Կ-ի ռեսուրսներն օգտագործելու իր պարտականությունները.
    - Օր., Կ-ի ռեսուրսների պաշտպանումն այնպիսի տնտեսական գործոնների անբարենպաստ ազդեցությունից, ինչպիսին են գնային և տեխնոլոգիական փոփոխությունները.
    - Ապահովումը, որ Կ-ը համապատասխանի կիրառելի օրենքների, կանոնակարգերի պահանջներին և պայմանագրային հանձնառություններին:



# ՖՏ որակական բնութագրեր

- Որպեսզի ֆինանսական տեղեկատվությունը (ՖՏ) լինի օգտակար, այն պետք է՝
  - լինի **տեղին** և
  - **արժանահավատորեն ներկայացնի** այն, ինչ մտադրված է (կոչված է) ներկայացնել:
- Սրանք հիմնարար որակական բնութագրերն են:
  - ՖՏ-ը, որը տեղին չէ կամ չի ապահովում արժանահավատ ներկայացում, օգտակար չէ և չի կարող դառնալ օգտակար՝ լինելով ավելի համադրելի, ստուգելի, ժամանակին կամ հասկանալի:



# Տեղին լինելը

---

- Օգտագործողների կողմից կայացվող որոշումների վրա ազդելու կարողություն
  - Կանխատեսական արժեք և/կամ
  - Հաստատական արժեք
- *Էականությունը* տեղին լինելու հայեցակարգի կիրառումն է կոնկրետ հաշվետու կազմակերպության ՖՀ համատեքստում, որը կախված է հոդվածների՝
  - բնույթից և/կամ
  - չափից



# Արժանահավատ ներկայացումը

- Որպեսզի պատկերումը լինի արժանահավատ ներկայացում, այն պետք է, առավելագույն հնարավոր չափով լինի՝
  - Ամբողջական,
  - Չեզոք և
  - Սխալներից զերծ:
- Արտացոլի ոչ միայն իրավական ձևը, այլ նաև տնտեսական բովանդակությունը (նոր նախագծով առաջարկվող լրացում):
- Չեզոք լինելու համար, անորոշության պայմաններում դատողություն անելիս, անհրաժեշտ է կիրառել զգուշավորություն՝ հաշվենկատություն (նոր տարբերակում վերականգնված շեշտադրում):
- Չափման անորոշությունն ազդում է արժանահավատ ներկայացման վրա:



# ՖՏ որակական բնութագրեր

- ՖՏ օգտակարությունը բարելավվում է, եթե այն **ավելի՝**
  - համադրելի է,
  - Ստուգելի է,
  - Ժամանակին է և
  - Հասկանալի է:
- (այսինքն որակական բնութագրերի բարելավումը պակաս առանցքային է, սակայն, այդուհանդերձ, խիստ ցանկալի):
  - ՖՏ-ը, որը տեղին է և ներկայացված է արժանահավատորեն, դարձյալ կարող է օգտակար լինել, նույնիսկ եթե չունի այդ բարելավող բնութագրերից որևէ մեկը:



# Ծախսային խոչընդոտ

- Ֆին. տեղեկատվության ներկայացումը ծախսեր է պահանջում, և կարևոր է, որ այդ ծախսերը արդարացվեն տեղեկատվության ներկայացումից բխող օգուտներով:
  - Նման օգուտներից է կապիտալի շուկայի ավելի արդյունավետ գործունեությունը և տնտեսության համար կապիտալի ավելի ցածր արժեքը:
  - Ծախսերը ներառում են ՖՏ հավաքման, մշակման, ստուգման և տարածման, ինչպես նաև տրամադրված տեղեկատվության վերլուծության ու մեկնաբանման ծախսերը:
- Կիրառելով ծախսային խոչընդոտի գաղափարը, ՀՀՄՍԽ-ը գնահատում է, թե արդյոք կոնկրետ տեղեկատվության տրամադրումից օգուտը հավանական է, որ կարդարացնի այդ տեղեկատվության տրամադրման և օգտագործման համար կատարվող ծախսերը:

# ՖՀ տարրերի սահմանումը. Ակտիվ

Գործող	Նոր
<ul style="list-style-type: none"><li>Կազմակերպության կողմից վերահսկվող միջոց,</li><li>որպես անցյալ դեպքերի արդյունք,</li><li>որից ապագա SO-ը ակնկալվում է, որ կհոսեն կազմակերպություն:</li></ul>	<ul style="list-style-type: none"><li>Կազմակերպության կողմից հսկվող ներկա տնտեսական ռեսուրս,</li><li>որպես անցյալ դեպքերի արդյունք:</li></ul>
	<ul style="list-style-type: none"><li>Տնտեսական ռեսուրսն իրավունք է, որն ունի SO ստեղծելու պոտենցիալ:</li></ul>



# ՖՀ տարրերի սահմանումը.

## Պարտավորություն

Գործող	Նոր
<ul style="list-style-type: none"><li>• Կազմակերպության ներկա պարտականություն,</li><li>• որն առաջանում է անցյալ դեպքերից,</li><li>• որի մարումն ակնկալվում է, որ կհանգեցնի կազմակերպությունից SO մարմնավորող միջոցների արտահոսքի:</li></ul>	<ul style="list-style-type: none"><li>• Կազմակերպության ներկա պարտականություն՝</li><li>• փոխանցելու տնտեսական ռեսուրս,</li><li>• որպես անցյալ դեպքերի արդյունք:</li></ul>
	<ul style="list-style-type: none"><li>• Պարտականությունը պարտք է կամ պարտավորվածություն, որից խուսափելու գործնական կարողություն չկա:</li></ul>

# ՏՀ տարրերի սահմանումը.

## Սեփական կապիտալ

Գործող	Նոր
<ul style="list-style-type: none"><li>Կազմակերպության ակտիվներում մնացորդային մասնակցությունը (բաժինը)՝</li><li>բոլոր պարտավորությունները հանելուց հետո:</li></ul>	<ul style="list-style-type: none"><li>Փոփոխություն չկա:</li><li>Պարտավորությունները ՍԿ-ից տարանջատելու մասին որևէ ուղեցույց չկա:</li><li>Կա ընթացքի մեջ գտնվող հետազոտական նախագիծ:</li></ul>

# ՖՀ տարրերի սահմանումը.

## Եկամուտ

### Գործող

- Հաշվետու ժամանակաշրջանում տնտեսական օգուտների աճ՝
- ակտիվների ներհոսքի կամ ավելացման կամ պարտավորությունների նվազման տեսքով,
- որը հանգեցնում է ՍԿ աճի,
- բացառությամբ **ՍԿ-ում մասնակիցների** կողմից կատարված ներդրումների հետևանքով ՍԿ-ի աճի:

### Նոր

- Ակտիվների աճ կամ պարտավորությունների նվազում,
- որը հանգեցնում է ՍԿ-ի աճի,
- բացառությամբ **ՍԿ-ում պահանջ ունեցողների** կողմից կատարված ներդրումների հետևանքով ՍԿ-ի աճի:

# ՖՀ տարրերի սահմանումը.

## Ծախս

### Գործող

- Հաշվետու ժամանակաշրջանում տնտեսական օգուտների նվազում՝
- ակտիվների արտահոսքի կամ սպառման կամ պարտավորությունների առաջացման ձևով,
- որը հանգեցնում է ՍԿ-ի նվազման,
- բացառությամբ ՍԿ-ում **մասնակիցներին** կատարված բաշխումների հետևանքով ՍԿ-ի աճի:

### Նոր

- Ակտիվների նվազում կամ պարտավորությունների աճ,
- որը հանգեցնում է ՍԿ-ի նվազման,
- բացառությամբ ՍԿ-ում **պահանջ ունեցողներին** կատարված բաշխումների հետևանքով ՍԿ-ի նվազման:



## Իրավունք (տնտեսական ռեսուրս)

---

- Պայմանագրով, օրենսդրությամբ կամ նմանատիպ միջոցներով սահմանվող իրավունքներ
- Այլ կողմի կառուցողական պարտականությունից առաջացող իրավունքներ
- Այլ իրավունքներ, որոնք մատչելի չեն այլոց (օրինակ՝ «նոու-հաու» կամ գործընկերների հետ փոխհարաբերությունների բնույթ)



# Պայմանագրով, օրենսդրությամբ կամ նմանատիպ միջոցներով ...

---

- Ֆինանսական գործիքներից առաջացող իրավունքներ
- Ֆիզիկական ակտիվների նկատմամբ իրավունքներ
- Այլ կողմի հետ նպաստավոր պայմաններով տնտեսական ռեսուրսների փոխանակելու իրավունք
- Իրավունք օգտվելու այլ կողմի պարտականությունից՝ լինելու պատրաստ փոխանցելու տնտեսական ռեսուրսներ ապագա անորոշ դեպքերի տեղի ունենալու պարագայում
- Ապրանքներ կամ ծառայություններ ստանալու իրավունք
- Մտավոր սեփականության իրավունքներ, օրինակ՝ գրանցված պատենտ



# Տնտեսական ռեսուրս

---

- Այլոց համար հավասարապես մատչելի իրավունքները տնտեսական ռեսուրսներ չեն:
- Տնտեսական ռեսուրսը հենց առկա իրավունքն է, այլ ոչ թե այդ իրավունքով ստեղծվելիք ապագա տնտեսական օգուտները:



# Տնտեսական օգուտներ ստեղծելու պոտենցիալը

---

- Պարտադիր չէ, որ տնտեսական օգուտներ ստեղծելը լինի հաստատ կամ էլ հավանական:
- Անհրաժեշտ է միայն, որ տնտեսական ռեսուրսն արդեն իսկ գոյություն ունենա, և գոյություն ունենա գոնե մեկ իրավիճակ, որում այն կստեղծի տնտեսական օգուտներ:





# Տնտեսական օգուտներ

---

- Պայմանագրային ԴՀ ստացում
- Այլ տնտեսական ռեսուրսի ստացում կամ փոխանակում նպաստավոր պայմաններով
- Տնտեսական ռեսուրսի օգտագործում ԴՄ ներհոսք ստեղծելու (կամ արտահոսքը տնտեսելու) համար
  - ապրանքի արտադրութեն, ծառայությ. մատուցմ
  - այլ տնտ. ռեսուրսի արժեքի ավելացում
  - գրավադրում վարկի ապահովման համար
  - վարձակալության տալ
  - ստանալ ծառայություններ, որոնց նկատմամբ իրավունք է տալիս տնտ. ռեսուրսը
- Վաճառքը փողի կամ այլ տնտ. ռեսուրսի դիմաց
- Փոխանցումը պարտավորություններ մարելու համար
- Սեփական կապիտալում պահանջների բավարարում



# Հսկողություն

---

- Հսկողությունը տնտեսական ռեսուրսը (ՏՌ-ը) կապում է կազմակերպությանը (Կ):
- Կ-ը հսկում է ՏՌ-ը, եթե այն ունի ներկա կարողություն **ուղղորդելու ՏՌ-ի օգտագործումը** և ստանալու դրանից հոսող տնտեսական օգուտները (ՏՕ-ը):
- ՏՌ-ի օգտագործումն ուղղորդելու կարողությունն առկա է, եթե Կ-ն իրավունք ունի գործարկել այդ ռեսուրսն իր բիզնեսում կամ թույլ տալ մեկ այլ կողմի գործարկել ռեսուրսն այդ կողմի բիզնեսում :



## Հսկողություն (շարունակություն)

---

- Հսկողություն կարող է առաջանալ նաև, երբ Կ-ն ունի ներկա կարողություն թույլ չտալու բոլոր մյուս կողմերին ուղղորդելու ՏՌ-ի օգտագործումը և ստանալու դրանից հոսող ՏՕ-ը:
- Հսկողությունը չի նշանակում, որ ռեսուրսն անպայման կստեղծի տնտեսական օգուտներ բոլոր հանգամանքներում: Դա նշանակում է, որ եթե ռեսուրսը ստեղծում է ՏՕ, ապա այդ օգուտների ստացողը կլին Կ-ը:
- Եթե Կ-ը պահում է ՏՌ որպես գործակալ, որը գործում է պրինցիպալի անունից և ի շահ նրա, ապա նա չի վերահսկում այդ ՏՌ-ը:



# ՏՌ փոխանցելու պարտականություն

---

- Պարտավորությունը կազմակերպության՝ ՏՌ փոխանցելու ներկա պարտականություն է, որպես անցյալ դեպքերի արդյունք:
- Եթե մի կողմն ունի ՏՌ փոխանցելու պարտականություն, ապա մեկ այլ կողմ ունի իրավունք ստանալու այդ ՏՌ-ը:
- Սակայն դա չի նշանակում, որ եթե մի կողմը ճանաչում է ակտիվ (պարտավորություն), ապա մյուս կողմը պարտավոր է ճանաչել համապատասխան պարտավորությունը (ակտիվը) և չափել նույն գումարով:



# ՏՌ փոխանցելու պարտականություն (շարունակություն)

---

- ՏՌ փոխանցելու պարտականությունը պետք է ունենա մեկ այլ կողմի՝ ՏՌ փոխանցելը պահանջելու պոտենցիալ:
- Պարտադիր չէ, որ Կ-ից այլ կողմին ՏՌ փոխանցելը պահանջելը հաստատ կամ հավանական լինի:
- Անհրաժեշտ է միայն, որ պարտականությունն արդեն իսկ գոյություն ունենա, և գոյություն ունենա գոնե մեկ իրավիճակ, որում Կ-ից կպահանջվի ՏՌ փոխանցել այլ կողմի:



# ՏՌ փոխանցելու պարտականության օրինակներ

---

- Վճարել փող
- Փոխանցել այլ ակտիվներ
- Փոխանակել ՏՌ այլոց հետ ոչ նպաստավոր պայմաններով
- Մատուցել ծառայություններ
- Թողարկել մեկ այլ պարտականություն, որը կպարտադրի կազմակերպությանը
- Անհրաժեշտ է միայն, որ պարտավորեցնի կազմակերպությանը փոխանցել ՏՌ



# Պարտականությունը կատարելու փոխարեն՝

---

- Մարել այն՝ բանակցելով հասնելով դրանից ազատման
- Փոխանցել պարտականությունը երրորդ կողմի
- Պարտականությունը փոխարինել ՏՌ փոխանցելու մեկ այլ պարտականությամբ



# Ներկա պարտականություն

---

- Կազմակերպությունն ունի ՏՌ փոխանցելու ներկա պարտականություն, եթե
- Կ-ը **չունի փոխանցումից խուսափելու գործնական կարողություն և**
- Պարտականությունն առաջացել է անցյալ դեպքից՝
  - Կ-ն ստացել է տնտեսական օգուտներ կամ
  - Կ-ն իրականացրել է գործունեություն, որով և ձևավորվել է պարտականության չափը





# Փոխանցումից խուսափելու գործնական կարողություն չունենալ

- Փոխանցումն իրավական առումով պարտադրելի է
- Խուսափումը կհանգեցնի բիզնեսի նորմալ ընթացքի խանգարման կամ
- ավելի բացասական տնտեսական հետևանքների, քան փոխանցումն է ինքնին
- ՖՀ անընդհատության հիմունքով պատրաստելու պարագայում խուսափել կարողանալ միայն լուծարմամբ կամ գործունեության դադարմամբ
- ՖՀ անընդհատության հիմունքով պատրաստելու պարագայում պարտականություններ, որոնք առաջանում են միայն լուծարման կամ գործունեության դադարման ժամանակ



# Կառուցողական պարտականություն

---

- ՏՌ-փոխանցում կարող է պահանջվել նաև՝
- Կազմակերպության սովորական պրակտիկայից
- Հրապարակված քաղաքականությունից կամ կոնկրետ պնդումներից (խոստումներից)



# Ճանաչում. գործող մոտեցումը

---

- Բավարարել տարրի սահմանմանը
- Բավարարել ճանաչման համընդհանուր երկու չափանիշներին՝
  - Արժեք
  - հավանական



# Ճանաչում. նոր մոտեցումը

---

- Ակտիվի կամ պարտավորության ճանաչումը «չհաջողացնելը» ՖՀ-երը դարձնում է պակաս ամբողջական՝ բաց թողնելով օգտակար տեղեկատվություն:
- Սակայն որոշ հոդվածների ճանաչումը չի ապահովում օգտակար տեղեկատվության ապահովում:
- Կարող է կարիք լինի, որ տարբեր ստանդարտներում կիրառվեն տարբեր ճանաչման չափանիշներ:
- Կազմակերպությունը պետք է ճանաչի ակտիվը կամ պարտավորությունը, եթե այդպիսով այն կապահովի.
  - Տեղին տեղեկատվություն
  - Արժանահավատ ներկայացում
  - Ծախսումները գերազանցող օգուտներ



# Ճանաչումը կարող է չտրամադրել օգտակար տեղեկատվություն, երբ

---

- Տեղին լինելու վրա ազդող գործոններ
  - Անհատակ է, թե արդյոք գոյություն ունի ակտիվ կամ պարտավորություն
  - Առկա է միայն ցածր հավանականություն, որ տնտեսական օգուտների ներհուք կամ արտահուք կառաջանա
- Արժանահավատ ներկայացվելու վրա ազդող գործոններ
  - Առկա բոլոր չափումներն ունեն բարձր մակարդակի չափման անորոշություններ:
  - Ճանաչման անհետևողականություն (հաշվապահական անհամապատասխանություն)
  - Ներկայացման և բացահայտման հետ կապված հարցեր



# Ապաճանաչում

---

- Ակտիվի կամ պարտավորության (ամբողջությամբ կամ մասամբ) դուրս բերումն է ՖՎՄՀ-ից
- Ապաճանաչումը տեղին է
  - Ակտիվի համար. կազմակերպությունը կորցնում է հսկողությունը ճանաչված ակտիվի կամ դրա մասի նկատմամբ
  - Պարտավորության համար. կազմակերպությունն այլևս չունի ներկա պարտականություն ճանաչված պարտավորության կամ դրա մասի գծով
- Ապաճանաչման նպատակն է արժանահավատորեն ներկայացնել՝
  - Ակտիվները կամ պարտավորությունները, որոնք մնացել են ապաճանաչման հանգեցրած գործարքից հետո,
  - Այդ գործարքի արդյունքում կազմակերպության ակտիվներում և պարտավորություններում տեղի ունեցած փոփոխությունը



# Չափումը

---

- ՖՀ-ում տարրերը ճանաչվում են դրամական արտահայտությամբ չափվելով: Դրա համար անհրաժեշտ է չափման հիմունքի ընտրություն:
- Չափման հիմունքը չափվող հոդվածի որոշակիացվող հատկանիշ է, օրինակ՝
  - Սկզբնական արժեք
  - Իրական արժեք
  - Կատարման արժեք
- Չափման հիմունքը ակտիվի կամ պարտավորության նկատմամբ կիրառելու արդյունքում ձևավորվում է ակտիվի կամ պարտավորության և դրա հետ կապված եկամուտների ու ծախսերի մեծությունը:



## Չափման սկզբնական արժեքի հիմունքը

---

- ՍԱ-ը տրամադրում է տեղեկատվություն, որը, առնվազն մասամբ, ստացվում է չափվող հողվածն առաջացրած գործարքի կամ այլ դեպքի գնից:
- Ակտիվի ՍԱ-ը նվազեցվում է, երբ ակտիվն արժեզրկվում է, իսկ պարտավորության ՍԱ-ն ավելացվում է, երբ այն դառնում է անբարենպաստ:
- Չափման ՍԱ-ի հիմունքը ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների նկատմամբ կիրառելու մի եղանակ է դրանք ամորտիզացված արժեքով չափելը:





# Չափման ընթացիկ արժեքի հիմունքը

- ԸԱ-ը տրամադրում է տեղեկատվություն, որը թարմացվում է՝ արտացոլելու համար չափման ամսաթվի պայմանները:
- Չափման ԸԱ-ի հիմունքը ներառում է՝
  - Իրական արժեքը. Գինը որը չափման ամսաթվի դրությամբ կստացվեր ակտիվի վաճառքի համար կամ կվճարվեր պարտավորության փոխանցման համար շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում:
  - Օգտագործման արժեքը (ակտիվների համար) և կատարման արժեքը (պարտավորությունների համար). Արտացոլում է ապագա դրամական հոսքերի գումարի ժամկետի և անորոշության վերաբերյալ կազմակերպությանը հատուկ ընթացիկ ակնկալիքները:
  - Ընթացիկ արժեքը. Արտացոլում է ընթացիկ գումարը, որը կվճարվեր համարժեք ակտիվ գնելու համար կամ կստացվեր համարժեք պարտավորություն ստանձնելու համար:



## Չափման հիմունք ընտրելիս հաշվի առնվող գործոններ

---

- Տեղին լինելու վրա ազդող գործոններ
- Արժանահավատ ներկայացվելու վրա ազդող գործոններ
- Ծախսային խոչընդոտ



# Տեղին լինելու վրա ազդող գործոններ

- Ակտիվի կամ պարտավորության բնութագրեր
  - Դրամական հոսքերի փոփոխականությունը
  - Արժեքի զգայունությունը շուկայական գործոնների կամ այլ ռիսկերի հանդեպ
  - Ամորտիզացված արժեքը չի կարող տրամադրել տեղին տեղեկատվություն ածանցյալի վերաբերյալ
- Ապագա դրամական հոսքերին նպաստելը
  - Արդյոք ԴՀ-ը ստեղծվում են ուղղակիորեն կամ անուղղակիորեն այլ ՏՌ-երի համակցությամբ
  - Կազմակերպության գործառնությունների բնույթը
  - Օր., եթե ակտիվներն օգտագործվում են այլ ակտիվների համակցությամբ ապրանքներ կամ ծառայություններ արտադրելու համար, ապա սկզբնական արժեքը կարող է տրամադրել տեղին տեղեկատվություն ժամանակաշրջանի ընթացքում ստացված գնանցքների (մարժաների) մասին



# Արժանահավատ ներկայացվելու վրա ազդող գործոններ

---

- Չափման անորոշություն
  - Պարտադիր չէ, որ բացառի չափման հիմունքի օգտագործումը, որը տրամադրում է տեղին տեղեկատվություն
  - Սակայն, եթե շատ բարձր է անորոշությունը, ապա կարիք կլինի դիտարկել չափման այլ հիմունքների ընտրությունը
- Չափման անհետևողականություն (հաշվապահական անհամապատասխանություն)
  - Չափման անհետևողականություն (հաշվապահական անհամապատասխանություն) պարունակող ՖՀ-ը կարող են արժանահավատորեն չներկայացնել կազմակերպության ֆինանսական վիճակի և ֆինանսական կատարողականի որոշ ասպեկտներ



## Ներկայացում և բացահայտում

- Հաշվետու կ-ը իր ակտիվների, պարտավորությունների, սեփական կապիտալի, եկամուտների և ծախսերի մասին տեղեկատվությունը հաղորդակցում է ՖՀ-ում տեղեկատվությունը ներկայացնելով և բացահայտելով:
- ՖՀ-ում տեղեկատվության արդյունավետ հաղորդակցումը պահանջում է՝
  - կենտրոնանալ ներկայացման և բացահայտման նպատակների և սկզբունքների վրա, այլ ոչ թե կանոնների,
  - Տեղեկատվությունը այնպես դասակարգելով, որ միանման հոդվածները միավորվեն, իսկ տարբերները առանձնացվեն,
  - Տեղեկատվությունն ընդհանրացնել այնպես, որ այն չմշուշվի ոչ անտեղի մանրամասներով, ոչ էլ չափազանց ընդհանրացմամբ:
- Դասակարգումը ՖՀ տարրերի տեսակավորումն է ներկայացման և բացահայտման նպատակներով՝ ընդհանուր բնութագրերի հիման վրա, օր.՝ բնույթը, գործառույթը, չափումը:



## Շահույթ կամ վնաս (ՇԿՎ)

---

- ՇԿՎ-ի հաշվետվությունը կազմակերպության ֆինանսական կատարողականի մասին հիմնական տեղեկատվական աղբյուրն է:
- Եկամուտներն ու ծախսերը դասակարգվում և ներառվում են՝
  - Կամ ՇԿՎ-ում
  - Կամ ՇԿՎ-ից դուրս՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում (ԱՀՖԱ):